ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1415-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 48.1 հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերով, 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշման 46.2-րդ կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով Արկադի Ավագյանի 29.09.2022թ. թիվ 5234 դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 3 հասցեում գտնվող 28.8 քմ մակերեսով հողամասին կից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28092022-04-0031 վկայական) ընդլայնման նպատակով կառուցապատման իրավունքով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որը ընդլայնման նպատակով տրամադրվող Հանրապետության փողոց 3/3 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը 6.0 քմ է, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս,որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ տրամադրվող հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակություն և ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 3 հողամասին կից՝ Հանրապետության փողոց 3/1

հասցեում, 6.0 քմ մակերեսով հողամասն ընդլայնման նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Արկադի Ավագյանին:

2. Ընդհանուր գույքին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 3:

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի անունից կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ գործողության ժամկետը սահմանելով մինչև 22.072.2029 թվականը,իսկ կառուցապատման իրավունքի տարեկան վճար՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ 1 քմ հողամասի համար:

4. Սահմանել, որ

ա) կառուցապատման իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարում է Արկադի Ավագյանը՝ իր միջոցների հաշվին,

բ) տաղավարի տեղադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում ոչ հիմնական շինությունների տեղադրման համար սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց և տաղավարի էսքիզային նախագիծը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց հետո,

գ) տաղավարի տեղադրման հսկողությունը հանձնարարվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների համակարգման բաժնին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽԱՉԻԿՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 30
ք. Արմավիր